ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿԶԻ
ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ
ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),
ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Քրիստոս ծնաւ և հայտնեցաւ.

Փրկչի Իջմած Սուրբ Տաճարեն, Նոր Տարվա սեմին, քաղցր է Մեզի համար Ձեզի ավետել Ս. Ծնունդը և Աստվածահայտնությունը Տեառն մերո Հիսուսի Քրիստոսի, աղոթելով, որ Բարձրյալն Աստված Իր օրհնությունը և խաղաղությունը տարածե մեր օրերու աշխարհին վրա՝ ի փրկություն և երջանկություն համայն մարդկության:

Այսօր, մարդիկ և ժողովուրդներ, բոլորն անխտիր, սուրբ սպասումներով և հույսերով լի, իրենց հոգիները կբանան հրեշտակներու անուշ երգին՝ պաղատագին հայցելով, որ աշխարհի վրա ըլլա ավելի խաղաղություն և մարդոց միջև ավելի հաճություն:

Սուրբ Ծննդյան ավետիսով կողջունենք զՁեզ, սիրելի Եղբայր Մեր, մաղթելով արևշատություն և երկնային օգնականություն՝ ի խնդիր Ձեր եկեղեցաշեն ու ազգանվեր գործոց հաջողության:

Մեր հայրական ողջույնը և օրհնությունը նաև Ձեր աստվածասեր հոգևոր դասուն և համայն Ձեր հավատացյալ ժողովուրդին՝ խաղաղ ու արդյունաշատ աշխատանքի մաղթանքներով հանդերձ:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ և յաւիտեան: Ամէն»:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

***

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչության և խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական Վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության Կենտրոնական Խնամակալության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազեր եդո Պերտիգանին (Լիսաբոն), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Ս. Էջմիածնի հանձնախմբի նախագահ պր. Կ. Ալթունյանին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

***

Շնորհարզարդ Եղբայր ի Քրիստոս,

Նոր Տարվան և Փրկչի Ս. ծննդյան հրաշալի տոնին առթիվ Ձերդ Ս. Օծության կներկայացնենք Մեր սրտալից և ջերմ շնորհավորություններն ու լավագույն մաղթանքները:

Ի խորոց սրտի կաղոթենք, որ Բարձրյալն Աստված պարգևե Ձեզի քաջառողջ և երջանկալից երկար կյանք և լիակատար հաջողությամբ պսակե եկեղեցանվեր Ձեր բոլոր ճիգերն ու ջանքերը:

Մաղթենք, որ Բեթղեհեմի Մանուկը, Տեր Հիսուս Քրիստոս, խաղաղություն շնորհե համայն մարդկության և արդարություն հաստատե այս երկրի վրա:

Սեր սրտի խորագույն աղոթքն է, որ Բեթղեհեմի երկնակամարին վրա հայտնված պայծառափայլ աստղին լույսովը առաջնորդվի մեր ժողովուրդին կյանքը հառաջիկա տարվան ընթացքին՝ եղբայրական սիրո, փոխադարձ հասկացողության, միասնական ոգիի և համերաշխ գործակցության սուրբ ճամբաներով:

Թող անշարժ և անսասան մնա Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին և բարգավաճ ու ծաղկյալ կյանք ունենա հավատացյալ Հայ ժողովուրդը Մայր Հայրենիքին մեջ և ի Սփյուռս աշխարհի:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ.

Աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

ԱՆԹԻԼԻԱՍ

***

Նոր տարվա և Ս. Ծննդի առթիվ ընդունեցեք ամենաանկեղծ շնորհավորանքները՝ իմ, Սրբոց Հակոբյանց Միաբանության և Հորդանանի ողջ հայ համայնքի: Մաղթում ենք, որ Ամենակարողը պարգևի Ձեզ հաջողության և բարօրության երկար տարիներ և Մայր Աթոռին՝ անսասանություն:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Երուսաղեմի

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Վեհափառ Տեր,

Ամաւորը և հաջորդող Ս. Ծննդյան տոնը կբերեն մեզի դարավոր, բայց երբեք չհինցող և չմաշող հավերժական ճշմարտությունը, թե պատմության մեջ երջանիկ օր մը, լուռ ու պայծառ գիշեր մը Աստվածությունը «ընդ մեզ» եղավ նաև ֆիզիկապես:

Արդարև մարդեղությամբ Աստված «բնակեաց ի մեզ», բաժնեց մեր վիշտերը. «Նա զգաւս մեր եբարձ». և մեր փոքր սերերուն՝ մեր բարեկամության և մեր ընկերային սեղաններուն մասնակից դարձավ. «Դուք բարեկամք իմ էք»:

Օրհնենք զԱյն սիրով և սիրտով. «Զի վասն մեր մարմնացաւ»:

Սիրենք զԱյն. «Զի նա նախ սիրեաց զմեզ»:

Փոխանցենք իրարու հրեշտակեն տրված մեծ ավետիսը «Որ եղեւ վասն Ամենայն ժողովրդեանն»:

«Զի ծնաւ մեզ այսօր Փրկիչ»:

Սուրբ ու երջանիկ այս առիթով կմաղթենք Ձեր Ս. Օծության հաստատուն զորություն և սրտի անդորրություն՝ շարունակելու համար նույնքան նվիրումով և նույնքան արդյունավետությամբ Ձեր հովվապետական գործը՝ ի մխիթարություն Սրբության, ի շինություն Ս. Եկեղեցվույս և ի մեծ փառս Մարմնացյալ Որդվույն և մեր Տիրոջ և Փրկչին, որ է օրհնյալ ընդ Հոր և Հոգվույն Սրբո:

Մատչելով ի համբույր Օծելույդ Ս. Աջին խոնարհ աղոթակից՝

ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Թուրքիո

ՅՍԱՄԲՈՒԼ

***

Ամաւորի և Ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղում բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի թեմակալ առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: